UNIVERSITÄT GREIFSWALD
Wissen lockt. Seit 1456

Պրոֆ. Սեբաստիան Գյունտեր

Գրեյֆսվալդի համալսարան

«Շրջակա միջավայրի աղտոտումը հակամանրէային պրեպարատների մնացորդներով և կայուն բակտերիաներով»

Սեպտեմբերի 18, ժամը 11:00
ՀՀ ԳԱԱ նախագահության
նիստերի դահլիճ

Սեպտեմբերի 18-ին, ժամը 11:00-ին, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում զեկույցով հանդես կգա Գերմանիայի Դաշնային Հանրապետության Գրեյֆսվալդի համալսարանի պրոֆեսոր Սեբաստիան Գյունտերը:

Զեկուցման թեման է՝ «**Environmental pollution by antimicrobial residues and multiresistant bacteria**»:

Պրոֆեսոր Սեբաստիան Գյունտերը (H-index: 43, Scopus) 100-ից ավելի գիտական հրապարակումների հեղինակ է:

Պրոֆեսոր Սեբաստիան Գյունտերի հետազոտությունները ուղղված են թիրախային բակտերիալ վիրուլենսային գործոնների վրա կենսաակտիվ միացությունների ազդեցության ուսումնասիրմանը՝ վերլուծելով հակաբակտերիալ և հակավիրուլենսային միացությունների ազդեցության մեխանիզմները և կիրառելով դեղերի հայտնաբերման համար համակարգչային մեթոդները:

Հետազոտությունների շրջանակը ընդգրկում է հակամանրէային դիմակայունության դեմ պայքարում նոր դեղամիջոցների մշակումը, ինչպես նաև ցամաքային և ծովային աղբյուրներից, ինչպիսիք են սնկերը, ցիանոբակտերիաները, միկրոջրիմուռները և բույսերը, կենսաակտիվ բնական միացությունների անջատումը և վերլուծությունը: Հետազոտությունները ներառում են նաև հակաբիոտիկների և ծանր մետաղների մնացորդային քանակների վերլուծություն, ֆիտոպատրաստուկների կենսաակտի-վության ուսումնասիրություն և բջջային նորարարական թեստ-համակարգերի մշակում:

Լեզուն՝ անգլերեն:

Մուտքն ազատ է: